Հայտարարություն

Ուսուցչի թափուր տեղի հայտարարություն
Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի <<Արգինայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (24 դասաժամ), աշխարհագրություն (7 դասաժամ), կերպարվեստ (8 դասաժամ), տեխնոլոգիա (3 դասաժամ), Ֆիզիկա (7 դասաժամ), ինֆորմատիկա (2 դասաժամ), ԹԳՀԳ (4 դասաժամ), կենսաբանություն (8 դասաժամ), և երաժշտություն (8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
• դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
• բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
• անձը հաստատող փաստաթուղթ,
• «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
• ինքնակենսագրություն (Ձեւ 5),
• այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
• ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
• որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա հունիսի 13-ին ՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոցում. Հասցեն՝ Արմավիրի մարզ, գյուղ Արգինա
Տեղեկությունների համար զանգահարել 094350541 հեռախոսահամարով: